

ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ
ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Նանա Առուստամյան

Բանակի բառեր՝ Եվրասիականություն, քաղաքակրթություն, նույնականացում, Վ. Լամանսկի, Ն. Դանիելսկի, ռուսական կայսրություն, զարգացման վայր:

Եվրասիականության հայեցակարգի ուսումնասիրության համատեքստում հաստկապես կարևորվում է Եվրասիական քաղաքակրթական առանձնահատկությունների (նույնականացման) խնդիրը:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ Եվրասիական քաղաքակրթության տեսությունը ստեղծվել է Եվրասիականության սոցիալ-փիլիսոփիայական և մշակութաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից (Ն. Կարսավին, Գ. Վերնադսկի, Լ. Գումիշյով, Լ. Կարսավին, Ն. Տրուբեցլոյ, Պ. Սավիցլի): Նշված հեղինակների աշխատանքներում Եվրասիական պետության ստեղծումը և գոյությունը հիմնավորվում է աշխարհագրական, սոցիալական, պատմական, կրոնական գործոններով:

Քաղաքակրթությունը սահմանվում է հասարակության որակական, հոգևոր, նյութական, մշակութային, արժեքային համակարգի որոշակի չափանիշներով:

Եվրասիական քաղաքակրթությունն ընկալվում է որպես Եվրասիայի ժողովուրդների ընդհանրություն, որոնք միավորված են ընդհանուր զարգացման վայրով, պատմությամբ, մշակութային ավանդույթներով, լեզվով, կրոնով: «Զարգացման տարածք»[1] Եվրասիա (Ռուսաստան- Եվրասիա) Եվրասիականները անվանում էին Ուկե Հորդայի, Ռուսական կայսրության և ԽՍՀՄ տարածքի հետ գրեթե լիովին համընկնող տարածքը:

Ըստ Եվրասիականների՝ Եվրասիան ոչ թե Եվրոպայի և Ասիայի համադրություն է, այլ «միջին մայրամարք» է նրանց միջև: Գ. Վերնադսկին նշում էր, որ չկա երկու Ռուսաստան- Եվրոպական և Ասիական գոյություն ունի միայն մեկ Եվրասիական Ռուսաստան կամ Ռուսաստան-Եվրասիա:[2]

Կարելի է տարանջատել Եվրասիական քաղաքակրթության մի քանի պատմական շրջաններ: [3]

Առաջինը քոչվորների պետությունն է (1-ին հազարամյակից մինչև 15-րդ դար), երրոր հաջորդաբար իրար են փոխարինում սկզբությունների, թյուրքերի և մոնղոլների կայսությունները: Կառավարող շերտը քոչվորներն էին, գաղափարախոսությունը՝ հեթանոսությունը:

Եվրասիականները հասկապես կարևորում էին մոնղոլների պետությունը՝ Ուկե Հորդան՝ նշելով, որ դրա աշխարհաքաղաքական հետնորդը Մուկովյան իշխանությունն է: Եվրասիականները, չժմանելով մոնղոլական արշավանքների բացասական դերը, տեսնում էին նաև դրականը՝ կրոնական հանդիրժողականությունը:

Եվրասիական քաղաքակրթության զարգացման երկրորդ շրջանը Եվրասիայում ռուսական գերիշխանության՝ Մուկովյան իշխանության և Ռուսական կայսրության ժամանակահատվածն է ընդգրկում (15-րդ դարից մինչև 1917թ.): Եվրասիականները շեշ-

* Հոդվածն ընդունվել է 09.02.17

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

սույն էին, որ վերջիններս Մոնղոլական Հորդայի «Ժառանգներն» են:

Երրորդ շրջանը՝ Խորհրդային Միությունն է (1917-1991թթ.): Բոլշևիկները վերականգնեցին պետությունը որպես գերտերություն՝ ստեղծելով ուժեղ, ավտորիտար պետություն:

Եվրասիական քաղաքակրթությունը Եվրասիայի տարածքում բնակվող պավոնական և թուրանական ժողովուրդների ամբողջությունն է, որոնք միավորվում են պատմական ճակատագրով, մշակութային, բնակչինայական պայմանների նմանությամբ:

Անդրադարձալով քաղաքակրթական նոյնականացման խնդրին՝ նշենք, որ այն նոյնականացման ավելի լայն ու ռազինալի զարգացման ծնն է, որը սերտորեն կապված է լոկալ քաղաքակրթության պատկանելության գիտակցմամբ:

Քաղաքակրթական նոյնականացումն ունի համախմբող ու «մենք և ուրիշները» բաժանող գործառույթ:

Լոկալ քաղաքակրթությունների տեսության[4] շրջանակներում իրագործվող քաղաքակրթական նոյնականացման զարգացումն ուներ մի շարք առանձնահատկություններ:

Ուսաստանում լոկալ քաղաքակրթությունների տեսության հիմնադիրները Ալավոնաֆիլներն էին: Նրանք ծգուում էին նոր շունչ տալու (Վերականգնել) պատմության կրոնական փիլիսոփայությանը և այդ տեսական հիմքի վրա ստեղծելու Ուսաստանի կերպարը:

Ն. Ղանիելսակին՝ մշակութապատմական տիպերի հայեցակարգի հիմնադիրը՝ «Ուսաստան և Եվրոպա» աշխատության հեղինակը, լոկալ քաղաքակրթությունների տեսության մեջ կարևոր նորամուծությունն է կատարել՝ պնդելով, որ բոլոր մշակութապատմական տիպերը համարժեք են իրենց յուրահատկությամբ:

Ն. Ղանիելսակու նորարարությունը սահմանափակվում էր տեսության շրջանակներով, քանի որ Ուսաստանի և Եվրոպայի համեմատական վելրուծությունը պավոնաֆիլական զաղափարների ուժեղ ազդեցության տակ էր կատարվում: Դա արտահայտվում էր նաև նրանում, որ, նշելով ռուսական քաղաքակրթության բազմեթնիկությունը, դրան հասուն ուշադրություն չէր դարձնում: Ըստ նրա՝ այդ բազմազանությունը Վերանում է ռուսական գործոնի գերիշխանության պայմաններում: Հարկ է նշել, որ նա նաև պնդում էր, որ պետականություն չստեղծած և որևէ մշակութապատմական տիպի մեջ մտնող ժողովուրդները որոշակի փուլում կարող են ծնավորել իրենց մշակութապատմական տիպը:[5] Ասիախով՝ մշակութապատմական տիպերի հայեցակարգը հիմք էր ռուսական քաղաքակրթության մասին առավել բարդ և ռեալիստական պատկերացումների ծևավորման համար:

Ուսաստան-Եվրասիա հայեցակարգի ծևավորման գործում առավել կարևոր քայլ է կատարել էթնոգրաֆ և պավոնագետ Վ. Լամանսկին: Իր «Ասիական-Եվրոպական մայրցամաքի 3 աշխարհները»(1892) գրքում նա իր առջև խնդրի էր որեն ցույց տալ Ուսաստանի ինքնակերպությունը լայն պատմական համատեքստում: Վ. Լամանսկին ընդունում է, որ իրենց Եվրասիան է խոչը քաղաքակրթությունների առաջացման հիմնական «օջախը»(բնօրդանը): Բացառություն են կազմում միայն Եգիպտոսը և Մեզուամերիկայի հնագույն քաղաքակրթությունները: Եվրասիական աշխարհամասի յուրօրինակությունը բացատրվում է աշխարհագրական պայմանների բարենպաստ լինելու հանգամանքով:[6] Հսկայական Եվրասիական տարածությունը Վ. Լամանսկին բաժանում էր երեք մասի՝ իհմք ընդունելով աշխարհագրական, էթնիկ, մշակութապատմական առանձնահատկությունները: Դրանք են՝ Եվրոպա, Ասիա և Ուսաստան, որը սահմանվում է որպես «Սիրին աշխարհ, ոչ Եվրոպա, ոչ էլ Ասիա»:

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Պետք է նշել, որ Վ. Լամանսկու մոտ քաղաքական միասնության գործոն, իր կարևորությամբ հանդերձ, չի խոչընդոտում Ուսաստանի քաղաքակրթական ինքնակերպության ավելի լայն ընկալումը՝ շեշտելով նրա մշակութային և էթնիկ բազմազանությունը(տարասեռությունը): Ուսաստանը հստակորեն բաժանվում է 2 մասի՝ Եվրոպական և ասիական: Ասիական Ուսաստանը կազմում է Եվրոպականի բնական շարունակությունը, դա բացատրվում է նրանով, որ ռուսական Ասիան, ի տարբերություն արևելյան Ասիայի, բնակեցված էր «քարտրարության»(զարգացման ցածր) մակարդակում գտնվող հարաբերականորեն քիչ ցեղերով: Դրանով է բացատրվում Եվրոպական Ուսաստանի տիրապեսող դերը: Ուսաստանի Եվրոպական մասը Վ. Լամանսկին նմանեցնում էր Արևմտյան Եվրոպային՝ դիտարկելով կրոնի և քարոյական իդեալների ընդհանությունը և հունահիումեական քաղաքակրթության ազդեցությունը: Ըստ նրա՝ Արևմուտքը և Միջին աշխարհը կազմում են մեկ քրիստոնեական ընդհանություն, որը ասիականի հակադրությունն է: Ասիան, Արևելքը Լամանսկին դիտարկում է որպես «ծերության, անցյալի, փլատակների աշխարհ», որն առանց հոգևոր վերածնաման ի վիճակի չէ յուրացնելու Եվրոպայի և Ուսաստանի համար ընդհանուր նորմերը: Եվրասիական աշխարհամասում ուժեղի հարաբերակցությունը հետևյալ կերպ է կատարվում: Արևելքի մի մասը պասիվ կերպով «ծերանում է», մյուսը՝ նոյն կերպ ռուսիֆիկացվում:[7] Քաղաքակրթական զարգացման գործում առաջատար դեր են խաղում Ուսաստանը և Եվրոպան:

Վ. Լամանսկու ամենամեծ ու կարևոր նորամուծությունն այն էր, որ Ուսաստանը սահմանում էր քազմէթմիկ քաղաքակրթություն, որտեղ առկա են ասիական էթնոսների և մշակույթի տարրեր: Այս առումով Լամանսկին առաջինն էր Ուսաստանն ընդունում որպես Եվրասիա: Ասիական կողմի պասիվության բնութագրմանը Վ. Լամանսկին Ն.-Ղանիելևսկու նման կարևորում է Ուսաստանի պլավոնաֆիլ կերպարը որպես պլավոնական և ուղափառ քաղաքակրթություն:

Եվրասիականները հիմնվում էին համաշխարհային պատմական գործընթացի միասնական հայեցակարգի վրա, որի առանցքը «քազմուղղվածություն» էր: Հատկանշական է, որ Եվրասիականների առաջին հրատարակությունները, որտեղ խոսվում էր պատմական գործընթացի՝ որպես ազգային մշակույթների տարրեր ուղղություններով ցիկլիկ զարգացման մասին, գորեք միաժամանակ են հայտնվում Օ. Շպենգերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատության հետ:

Համաշխարհային պատմական գործընթացի «քազմուղղվածության» գաղափարի տեսական հիմնավորման միակ փորձը Ն. Տրուբեցլոյի «Եվրոպան և մարդկությունը» (1920) գիրքն էր: Ն. Տրուբեցլոյն առաջընթացը դիտարկում էր որպես տարրեր մշակույթներում առկա բազմազան հնարավորությունների հրագործում:

Ինչպես Ն. Ղանիելևսկուն, այնպես էլ Եվրասիականներին գրավում էր «քազմուղղվածության» հայեցակարգի միտումը դեպի մշակույթի յուրօրինակություն, անկրկնելիություն: Հիմնականում Եվրասիականների մոտ պատմական գործընթացը զուրկ է ընդհանուր օրինաչափություններից (բացի ցիկլիզմի օրենքը). օրինակ՝ տարրեր մշակույթների մեկը մյուսին փոխարինելը, որոնք ըստ նշանակության համարժեք են, իսկ զարգացման ուղղվածությամբ՝ տարրեր:

Շպենգերի «Եվրոպայի մայրամուտը» ընկալվում էր որպես ցիկլիզմի խկությունը ապացուցող դրույ:

Սլավոնաֆիլները և նրանց հետնորդները նախ և առաջ ծգուում էին ապացուցելու Ուսաստանի ինքնարավության իրավունքը: Եվրասիականների առջև այլ խնդիր էր դրված՝ բացահայտել 1917թ. Հեղափոխության պատճառները, որը ավանդական ռու-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

սական մշակույթը քայլայեց:

Եվրասիականները զարգացրին Ն. Դամիելսկու այն գաղափարը, որ Եվրոպական կողմնորոշումը, նրան կրկնօրինակելու հիվանդությունը կարող է տանել կործանման: Այս արումով հատկանշական է Պ. Սավիցկու «Երկու աշխարհ»(1922) հոդվածը, որտեղ, հղում կատարելով Շպենգլերին, նա դիտարկում է հեղափոխության պատճառները և մատերիալիզմի ու աթեիզմի գաղափարների տարածումը որպես քաղաքակրթության կործանման տանող միտումներ: Ըստ Պ. Սավիցկու և այլ Եվրասիականների՝ սոցիալիզմի գաղափարը օտար է, արևմուտքի կողմից պարտադրված:

Եվրասիականները, «օտար» հոգևոր արժեքների յուրացումը համարելով կործանարար, հետաքրքրություն էին ցուցաբերում մշակույթի ինքնարուխ, օրգանական զարգացման հարցի նկատմամբ: Ն. Տրուբեցկոյն իր «Եվրոպան և մարդկությունը» գրքում, հիմնվելով Գ. Տարդի տեսության վրա, պնդում էր, որ մշակութային գործընթացը նոր արժեքների ստեղծում է, որը ի հայտ է գալիս «կոմբինացված նմանակման» արդյունքում: Օտար մշակութային ավանդույթի ներդրումը քայլայում է մշակույթի «օրգանականությունը» և այս արումով առավել վտանգավոր է Եվրոպան: Ուժանոգերմանական քաղաքակրթության հոգևոր էքսպանսիան Ն. Տրուբեցկոյը դիտարկում է որպես ցանկացած ինքնարավ մշակույթի համար աղետ:

Եվրոպականացումը խախտում է ժառանգականությունը և հասարակության մեջ պարակտում է մտցնում: Խորանում է մտավորական էլիտայի(որը հեշտությամբ ընկալում և յուրացնում է արևմտյան գաղափարները) և ժողովրդի(որը հակված է դեպի ավանդական մշակույթը) միջև անդունորդ: Նոր և ավագ սերնդի միջև պարակտում է սկսվում: Մշակույթի ստեղծագործական հնարավորությունները փոփրանում են, քանի որ իհն մշակութային ֆոնդի հետ կապը խզվում է, իսկ նորդ դեռ ձևավորվում է:

Եվրասիականների հակաԵվրոպակենտրոնությունը պայմանավորել է նաև Եվրասիա հասկացության հասուկ մեկնաբանությունը: Արածին հռչակագրում նշում էր, որ Եվրասիան ոչ թե Եվրոպականի և ասիականի միացում է, այլ հասուկ «աշխարհամաս», որը տարբերվում է Եվրոպայից և Ասիայից:

Արավել քննադատական էր Վերաբերմունքը Արևմտյան Եվրոպայի նկատմամբ: Եվրասիականները ոչ մի դրական կողմ չէին տեսնում Եվրոպական ազդեցության մեջ: Եվրոպայի և Ռուսաստանի հարաբերակցությունը Եվրասիականների մեծամասնությունը դիտարկում էր պավոնաֆիլների և Դամիելսկու ոգով:

Արևելքի նկատմամբ վերաբերմունքը պահելի բարդ ու ոչ միանշանակ էր: «Հնդկաստանի կրոնները և քրիստոնեությունը» հոդվածում Ն. Տրուբեցկոյը կոչու քննադատության էր ենթարկում բուդդիզմը և հինդուիզմը:

Եվրասիականների նպատակն էր ցույց տալ ասիական ժողովուրդների կրոնի և մշակույթի կառուցողական դերը ռուսական քաղաքակրթության ձևավորման և զարգացման գործում և հիմնավորել քազմէնիկ Ռուսաստան-Եվրասիայի մշակութային միասնության հնարավորությունը:

Մոնղոլական ցեղերը դիտարկվում էին որպես Եվրասիական՝ ծագմամբ և պատմական գործունեության բնույթով. նրանք պավոնների նման մասնակցում էին Ռուսաստան-Եվրասիայի քաղաքակրթական տարածության յուրացմանը և պետականության ստեղծման գործընթացին: Եվրասիականները կարևորում էին պետության դերը որպես ուժեղ քաղաքակրթական ուժ, որն ամրացնում և մեկ միասնության մեջ է ծովում մշակութային գործունեության բոլոր ձևերը, որպես «կողեկտիվ անհատականության» Եվրասիական ժողովրդի արարող էներգիայի արտահայտումներից մեկը:

Մոնղոլ-թաթարական լժի մասին Պ. Սավիցկին նշում էր, որ եթե նրանք չիննեին,

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

չէր լինի և Ուսաստանը՝ ռուսական պետականության մարմինը ստեղծեցին մոնղոլ-թաթարները, իսկ հոգին՝ սլավոնները:[8] Նա Ուսաստանն ընկալում էր որպես հզոր հորդա, կենտրոնացված պետություն, Զինգիշխանի տերության ժառանգ, և դա նրա Ուսաստան-Եվրասիայի հայեցակարգի կարևորագույն մասն էր:

Հարկ է նշել, որ «Ելք դեպի Արևելք»-ը հրագործվում էր նաև այլ ձևերով: Ասիական և թուրանական մշակույթներն սկսեցին դիտարկվել որպես Ուսաստան-Եվրասիայի հոգնոր մշակույթի անբաժանելի մաս: *Տեսական հիմքը «սիմֆոնիկ անհատականության» Եվրասիական հայեցակարգն էր, որի հիմքերը դրել էր Լ. Կարսավինը: «Սիմֆոնիկ անհատականության»[9] հայեցակարգով Եվրասիականները բարձրացրին նաև ռուսաստանի բազմակրոն լինելու խնդիրը:*

Չնայած Եվրասիականների հայեցակարգերի թույլ և հակասող կողմերին՝ «Եվրասիա» գաղափարը նոր մեկնաբանությունն էր ստանում: Եվրասիականների ձեռքբերումներից կարելի էր համարել այն, որ սլավոնականությանը չէին դիտարկում որպես միակ մշակութաստեղծ ուժ Եվրասիայի պատմության մեջ և կարևոր քայլ են կատարել Ուսաստանի՝ որպես բազմէթնիկ և բազմակրոն հետերոգեն քաղաքակրթության ընկալման ուղղությամբ:

Այս համատեքստում հետաքրքիր է անդրադառնալ Պ. Բիցիլիի ««Արևելք» և «Արևմուտք» Հին աշխարհի պատմության մեջ» հոդվածին, որտեղ ստեղծում է Արևելք-Արևմուտք-Ուսաստան հայեցակարգը:

Եվրասիական աշխարհամասի քաղաքակրթական կառուցվածքում Պ. Բիցիլին առանձնացնում է մերձծովային-ծայրամասային և կենտրոնական շրջաններ, որոնք էականորեն տարբերվում են իրարից. մերձծովային-ծայրամասային «աշխարհները» (Եվրոպա, Հնդկաստան, Իրան, Չինաստան) առավել ակտիվ դեր են ունեցել մշակութապատմական զարգացման գործընթացում, մինչդեռ «կենտրոնը»՝ քոչվորմերի հատուկ աշխարհը, բաժանված էր տարբեր մշտապես փոփոխվող, իրար դեմ պատերազմող կազմավորումների:[10]

Ուսաստան-Եվրասիայի խնդիրը, ըստ Պ. Բիցիլիի, Հին աշխարհի քաղաքակրթական կառուցվածքի, նրա մշակութային միասնության վերականգնումն է: Այս գործում հատուկ դեր տրվում Ուսաստանին:[11]

Այսահույս, ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք նշել հետևյալը.

1. Եվրասիականները համոզված են, որ Ուսաստանն ունի իր սեփական գարգացման ուղին, որը չի համրնենում արևմտյան քաղաքակրթության հիմնական ուղղության հետ: Վերջին հազարամյակի համաշխարհային պատմությունը ցուցադրում է Եվրասիական աշխարհի և արևմտյան քաղաքակրթության հակադրությունը՝ կամ ռուսները, կամ նրանք:

2. Եվրասիական աշխարհամասը դիտարկվում է որպես բարդ քաղաքակրթական կառույց՝ կազմված մի շալք ինքնաբավ լոկալ քաղաքակրթություններից, որոնց միջև դարեր շարունակ գոյություն են ունեցել ամուր տնտեսական, քաղաքական և մշակութային կապեր, որոնք իրագործվում էին համաշխարհային կայսրությունների շնորհիվ:

3. Ուսաստան-Եվրասիայի գաղափարը անքակտելիորեն կապված է ինքնաճանաչման, քաղաքակրթական նույնականացման գործընթացների հետ և դրա ձևերից մեկն է:

Եվրասիականությունը, փորձելով Ուսաստանը դիտարկել որպես բազմէթնիկ և բազմակրոն քաղաքակրթություն, գտնվում էր 19-րդ դարի քաղաքակրթական մտքի ազդեցության տակ:

4. Ներկայումս Եվրասիականության համար յուրահատուկ հնարավորություն է ըն-

ՄԵՐՈՐԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ճեղնվել վերածնվելու: Ժամանակակից Եվրասիականության հիմքում ինտեգրացիան է, որը պետք է ծառայի որպես մասնակից Երկրների տնտեսությունների արդիականացման, անվտանգության ապահովման և այլ խնդիրների լուծման կարևոր գործուն: Եվրասիական միությունը ստեղծվելու է որպես Մեծ Եվրոպայի մաս, ունիվերսալ ինտեգրացիոն սկզբունքների հիման վրա, միավորված ազատության, դեմոկրատիայի և շուկայական օրենքների միասնությամբ:

Եվրասիական միության ձևավորումը և զարգացումը Ենթադրում է ժամանակակից աշխարհակարգի միջազնության և միջազգային հարցերի քաղաքակիրթ լուծում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Россия–Евразия, срединная земля — П.Н. Савицкий <http://rusgeopolit.com/?p=452>
2. Вернадский Г. В. Начертание русской истории. - СПб.: Издательство "Ланъ", 2000, стр. 5-6
3. Рустем Вахитов — Евразийская цивилизация <http://nevmenandr.net/vaxitov/eurcivil.php>
4. Լոկալ քաղաքակրթությունների տեսությունը դրա էությունը քաղաքակրթական մուտեցման սկզբունքների հիման վրա բացահայտող հայեցակարգերի ամբողջություն է: Ավելի մանրամասն տես՝ «Понятие «Теория локальной цивилизации» <http://histref.ru/uploads/media/default/0001/08/f13a2e24ab97310112d4695ed64671cbda4b6654.pdf>
5. Данилевский Н.Я. Россия и Европа. М., 1991. стр. 89
6. Ламанский В.И. Три мира Азиатско-Европейского материала. СПб., 1892. стр. 2.
7. ՏԵ՛Ս նոյն տեղում էջ 14:
8. Савицкий П.Н. Степь и оседлость <http://gumilevica.kulichki.net/SPN/spn03.htm>
9. Савицкий П. Евразийство как исторический замысел. Прага. 1927 // <http://eurasian-movement.ru/archives/3939>
10. Бицилли П.Н. «Восток» и «Запад» в истории Старого Света <http://evraz-info.narod.ru/3.htm>
11. Ерасов Б.С. Цивилизации. Универсалы и самобытность. М., 2002, стр. 451, 455.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱԽԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՆԱԽԱ ԱՊՈԼԱՏՈԱՋԱՆ**

Հոդվածը նվիրված է Եվրասիական քաղաքակրթական առանձնահատկությունների խնդրի ուսումնասիրությանը:

Եվրասիական քաղաքակրթությունն ընկալվում է որպես Եվրասիայի ժողովուրդների ընդհանրություն, որոնք միավորված են ընդհանուր զարգացման վայրով, պատմությամբ, մշակութային ավանդույթներով, լեզվով, կրոնով:

Տարանջատվում են Եվրասիական քաղաքակրթության մի քանի պատճական շրջաններ:

Եվրասիան հանդես է գալիս որպես բարդ քաղաքակրթական կառույց՝ կազմված մի շարք ինքնարավ լոկալ քաղաքակրթություններից:

Եվրասիական միության ձևավորումը և զարգացումը Ենթադրում են ժամանակակից աշխարհակարգի միջազնության և միջազգային հարցերի քաղաքակիրթ լուծում:

РЕЗЮМЕ
О цивилизационных особенностях Евразийства
Нана Арутамян

Ключевые слова: евразийство, цивилизация, идентификация, В. Ламанский, Н.Данилевский, российская империя, месторазвитие.

Статья посвящена изучению цивилизационных особенностей Евразийства. Евразийская цивилизация воспринимается как совокупность народов, существующих в месторазвитии Евразии, объединенных общим местоположением, историей, культурными тенденциями, языками, религиями.

Выделяются несколько исторических периодов евразийской цивилизации. Евразия рассматривается как сложная цивилизационная структура, состоящая из ряда самобытных локальных цивилизаций. Формирование и развитие Евразийского союза предполагает цивилизованное решение межнациональных и межгосударственных проблем современного миропорядка.

SUMMARY
About Civilizational Peculiarities of Eurasianism
Nana Arustamyan

Keywords: eurasianism, civilization, identification, V.Lamanski, N.Danilevski, Russian Empire, place - development

The article deals with the investigation of civilizational peculiarities of Eurasianism. Eurasian civilization is perceived as a sum of people, living in Eurasia, united by common location, history, culture, language and religion.

Several historical periods of Eurasian civilization are distinguished. Eurasia is considered as a complicated civilizational structure, which consists of a number of original local civilizations.

The formation and the development of Eurasian Union suppose the civil solution of the interstational and international problems of contemporary world order.